ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ N1 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ

Հաստատում եմ՝

Երևանի Տարածաշրջանային N1պետական քոլեջի տնօրեն

_____ Պ. Սանթրոսյան

<<_06_>>_____05____2022թ.

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՀԵՏԱՏԱՐՁ ԿԱՊԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Երևանի Տարածաշրջանային N1 պետական քոլեջի տեղեկատվական հասանելիությունը և թափանցիկությունը հանդիսանում է քոլեջի գործունեության որակի կառավարման հիմնական ցուցանիշներից մեկը:

Քոլեջի նպատակն է իր գործունեության որակի բարելավման նպատակով կապ հաստատել հասարակության հետ, այսինքն ապահովել հետադարձ կապը հասարակության հետ: Հետադարձ կապն ուղղված է քոլեջի գործունեության և գործընթացների բարելավմանը:

Հասարակության հետ կապի հաստատման և հետադարձ կապի ապահովման նպատակներն են՝

1. հասարակության տեղեկացումը քոլեջի գործունեությանը,
2. հասարակությունից՝ հետադարձ կապի մեխանիզմներով և գործիքներով, կարծիքների և պահանջների հավաքագրումը, ուսումնասիրությունը և վերլուծությունը,
3. վերլուծությունների հիման վրա կրթական գործունեության բարելավումը,

4. արդյունքների հիման վրա կրթության բարելավմանն ուղղված միջոցառումների և որոշումների վերաբերյալ հասարակության տեղեկացումը:

Հասարակության հետ հետադարձ կապը նպաստակ ունի բարելավել, կատարելագործել և ըստ հասարակության կարծիքի, կրթական ծրագրերի և ծառայությունների, զարգացնել քոլեջի գործունեությունը:

Հասարակության հետ հետադարձ կապն որակի գնահատման հիմնական բաղադրիչներից է, որը պետք է հաշվի առնի հետադարձ կապը շրջանավարտներից, գործատուներից, ոլորտի մասնագետներից, ուսանողների ծնողներից և այլ շահակիցներից:

Հետադարձ կապի մեխանիզմներ և գործիքներ՝

Հետադարձ կապի մեխանիզմ կարող են հանդիսանալ հարցումները, ֆոկուս-խմբերը, սեմինարների ժամանակ հնչած կարծիքները, տվյալ գործընթացի կամ քոլեջի գործունեության վերաբերյալ կայքի, ֆբ-յան և յութուբյան էջերի հետադարձ կապով ստացված մեկնաբանությունները: Հասարակության յուրաքանչյուր անդամ պետք է հնարավորություն ունենա օգտվել հետադարձ կապից: Հետադարձ կապի մեխանիզմի հիմնական տարրերն են՝

- մշտադիտարկում,
- վերլուծություն,
- աղապտացում,
- պլանավորում:

Հետադարձ կապի հիմնական մեխանիզմներն են՝

- հասարակական կարծիքի ուսումնասիրություն (հարցումներ, հետազոտություններ, ֆոկուս-խմբեր),
- միջոցառումներ, սեմինարներ, հաշվետվություններ և այլն,
- հասարակությունից ստացված կարծիքների ուսումնասիրություն,

- ԶԼՄ-եր:

Հետադարձ կապի հիմնական գործիքներն են՝

- քոլեջի կայքի, ֆբ-յան և յութուբյան էջերի հետադարձ կապը,
- հարցաթերթիկներ,
- հանդիպումների արդյունքների արձանագրությունները:

Քաղաքականության իրականացումը հնարավորություն կտա՝

- չափել քոլեջի գործունեության արդյունավետությունը,
- հասարակության անմիջական և ոչ անմիջական ներգրավումը քոլեջի կառավարման գործընթացներին,
- զարգացնել կապը հասարակության հետ: